ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ (ՀՈՎՎԻ ԿԱՑԱՐԱՆ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25/1»

ք. Տաշիր «26» **մարտի 2021թ.**

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 1), և «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն, ի դեմս նախագահ՝ Մ. Այվազյանի, որը գործում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 2), որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ Գ. Թովմասյանը, մի կողմից, և «Լիմիերթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Խաչատրյանի, որը գործում է «Լիմիերթ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (հովվի կացարան) կառուցապատման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուները պարտավորվում են ընդունել կատարված աշխատանքը վճարել մրցույթում առաջարկված գնի 10/90 համաֆինանսավորմամբ (10% Պատվիրատու 1-ի և 90 % Պատվիրատու 2՝ առանց ԱԱՀ:**

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 31.05.2021թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի

թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 **Սույն պայմանագրի ընդհանուր վճարման ենթակա գումարը կազմում է 1221290 (մեկ միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամ:**

Պատվիրատու 1-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 122129 (հարյուր քսաներկու հազար հարյուր քսանինը) ՀՀ դրամ:

Պատվիրատու 2-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 1099161 (մեկ միլիոն իննսունինը հազար հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:

5.1.1 Համաձայն վճարման ժամանակացույցի (Հավելված 3) Կապալառուն կատարված աշխատանքների համար ներկայացնելու է 2 կարգի հաշիվ ապրանքագրեր ՝

Պատվիրատու 1-ին՝ հարկային հաշիվ ներառյալ ԱԱՀ,

Պատվիրատու 2-ին՝ հաշվարկային փաստաթուղթ առանց ԱԱՀ, որն ել իր հերթին պարտավորվում է ներկայացնել Կառավարության 26 փետրվարի 2004թ-ի 256-Ն Որոշման համաձայն ԱԱՀ-ից ազատման վերաբերյալ տեղեկանք:

Պատվիրատուները վճարումը կիրականացնեն Կապալառուի կողմից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ ապրանքագրի հիման վրա:

5.1.2 Վճարման ներկայացված յուրաքանչյուր հանձնման-ընդունման արձանագրություն հաշվարկվում է Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագրի հիման վրա, որը Կապալառուի կողմից ներկայացվում է սույն պայմանագրի պահանջների համաձայն: Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագիրը պետք է արտացոլի ողջ Պայմանագրի Արժեքի բաշխումը ըստ աշխատանքի առանձին փուլերի և ներկայացվի այն տեսքով և ժամկետներում, որոնք կերաշխավորեն դրա գործնական կիրառումը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Տաշիրի համայնքապետարան	<<Լիմիերթ>>ՍՊԸ
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94	Ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	ԱՇԲ ՓԲԸ Ստեփանավանի Մ/Ճ
Հ/Հ 900272544017	Հ/Հ 24714005772700 10
ՀՎՀՀ 06954139	ՀՎՀՀ 07203843
----------Է. Արշակյան	----------Լ.Խաչատրյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	

Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

«Ռազմավարական զարգացման գործակալություն»ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Մ. Այվազյան
լիազորված անձ՝ Գ. Թովմասյան

(ստորագրություն)

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«26» մարտի 2021թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25/1»
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ (ՀՈՎՎԻ ԿԱՑԱՐԱՆ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագադարնոյե բնակավայրի
,,Ավագի հանք,, արոտավայրի հովվի կացարանի կառուցում

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		Հողային աշխատանքներ				
1	1-1587	3 -րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	1000մ³	0,004		
2	1-961	բնահողի մշակում ձեռքով	մ³	1,10		
3	1-968	բնահողի փռում տեղում ձեռքով	մ³	5,00		
		Հիմքեր				
1	6-21 1-21	հիմքերի կառուցում Բ-7.5 մ.բ. խամքարաբետոնով	մ³	5,00		
2	6-91	Միաձույլ խամքարա-բետոնե որմնախարիսխի կառուցում Բ 7.5 բետոնով	մ³	0,6		
		Պատեր				
1	6-106	Միաձույլ ե/բ միջուկների կառուցում Բ -15 բետոնով	մ³	0,50		
2	շուկա	ամրան Φ16A500C	տն	0,0990		
3	շուկա	ամրան Φ6A 240	տն	0,0155		
4	8-163	պատերի կառուցում ուղիղ կտրվածքի Արթիկ տուֆ քարով	մ³	8,00		
5	Շուկա	ամրանային ցանց Φ6 A 240 / Ց-1/	տն	0,0137		
6	6-90	մ իաձույլ բետոնե գոտու կառուցում Բ 7.5 բետոնով	մ³	0,56		
7	շուկա	ամրան Φ12A500C	տն	0,0497		
8	շուկա	ամրան Φ6A 240	տն	0,0123		
9	շուկա	խարսխածող Φ12A500C ամրանից	տն	0,0164		
		Ծածկ				
1	6-173	միաձույլ ե/բ սալի կառուցում Բ 15 բետոնով	մ³	0,95		
2	շուկա	Ամրան Φ 16 A-500C	տն	0,0760		
3	շուկա	Ամրան Φ 14 A-500C	տն	0,0970		
4	շուկա	ամրան Φ12A500C	տն	0,1590		
		Բացվածքներ				
1	9-49 7-4	Նկուղի մետաղական դռների տեղադրում	տն	0,0155		
2	շուկա	շվելլեր N8	մ	6,5		
3	Շուկա	պողպատե խողովակ 40x20x2	մ	7,80		
4	Շուկա	Պողպ.թիթեղ b=1.5	մ²	1,90		
5	շուկա	մետաղական բռնակ	հատ	2		
6	շուկա	պողպատե ձող Φ18A500c	կգ	2,40		
7	Շուկա	ծխնի	հատ	2,00		
8	14-398	մետաղական դռների յուղաներկում 2 անգամ	100մ²	0,05		
9	շուկա	Մետաղապլաստե ապակեփաթեթով բացվող պատուհանների տեղադրում 60մմ հաստ./հայկական պրոֆիլ/	մ²	1,14		
10	շուկա	Մետաղապլաստե ապակեփաթեթով չբացվող պատուհանների տեղադրում 60մմ հաստ./հայկական պրոֆիլ/	մ²	0,66		
		Հատակներ	-	-		
1	11-2	Բնահողի տոփանում խճով	100մ²	0,095		
2	11-11	բետոնե նախաշերտ Բ7.5 մբ. 100մմ հաստ.	մ³	0,95		
3	11-55	Ց/ավազային հարթեց. շերտ 20մմ հաստ.	100մ²	0,095		

		Տանիք	-	-		
1	8-300	տանիքի փայտե կոնստրուկցիաների տեղադրում/ծպեղի ,կանգնակի, մարդակի և այլն//	մ^3	0,220		
2	8-14-B	Կավարամածի կառուցում	մ^2	13,2		
3	Շուկա	կավարամածի փայտանյութ	մ^3	0,066		
4	9-24	Տանիքի ծածկույթի իրականացում g/պրոֆիլավոր թիթեղից ԿՊ-25-0.55	100մ^2	0,132		
5	8-279	քիվի երեսապատում g/թիթեղով 0,55մմ	100մ^2	0,07		
6	10-203	Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով	100մ^2 մշակ մակ	0,132		
7	10-201	տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով	մ^3	0,22		
		հարդարում				
1	11-80	առաստաղի քսահարթում g/ավազային շաղախով	մ^2	9,4		
2	11 -126	պատերի սվաղում g/ա շաղախով	մ^2	27,0		
3	11-22	շեպերի սվաղում g/ավազային շաղախով	մ^2	1,10		
4	14-418	պատերի և շեպերի լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով	100 մ^2	0,281		
5	14-419	առաստաղի լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով	100մ^2	0,094		
6	15-210	Արտաքին շեպերի սվաղում g/ա շաղախով	100 մ	0,105		
7	11-98	ծակատների g/ավազային սվաղ	մ^2	39,0		
		Սալվածք				
1	1-1612 1-1618	տեղանքի հարթեցման համար բնահողի կտրումով մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փռելով տեղում	1000մ^3	0,027		
2	1-961	բնահողի մշակում ձեռքով	մ^3	5,00		
3	1-961	բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	5,00		
4	16-76	բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	0,19		
5	11-6	խճի նախաշերտ 8սմ	մ^3	1,30		
6	11-11	Բետոնե նախապատրաս-տական շերտ B12.5 մ.ք..,	մ^3	1,30		
7	11-55	Ց/ավազային հարթեց. շերտ 20մմ հաստ.	100մ^2	0,033		
		Ընդամենը			0,00	**1221.29**

* Կապալառուն աշխատանքները կատարում է **Տաշիր համայնքի Տաշիր և Բլագոդարնոյե բնակավայրեր հասցեում**:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

-------------------------------- **Է. Արշակյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Լիմհերթ>>ՍՊԸ
Ք.Ստեփանավան Րաֆֆի 12
ԱՇԲ ՓԲԸ Ստեփանավանի Մ/Ճ
Հ/Հ 2471400577270010
ՀՎՀՀ 07203843
Լ.Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
«Ռազմավարական զարգացման գործակալություն»ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ Մ. Ադամյան
լիազորված անձ Գ. Թումանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագադարնոյե բնակավայրի ,,Ավազի հանք,, արոտավայրի հովվի կացարանի կառուցում

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ	%
1	2	3	4	5	6	7	
		Հողային աշխատանքներ					0,72
1	1-1587	3 -րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	1000մ^3	0,004	430,0	1,72	
2	1-961	բնահողի մշակում ձեռքով	մ^3	1,10	2,0	2,20	
3	1-968	բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	5,00	1,0	5,00	
		Հիմքեր					14,41
1	6-21 1-21	հիմքերի կառուցում B-7.5 մ.բ. խամքարաբետոնով	մ^3	5,00	30,0	150,00	
2	6-91	Միաձույլ խամքարա-բետոնե որմնախարիսխի կառուցում B 7.5 բետոնով	մ^3	0,6	25,0	15,00	
		Պատեր					23,23
1	6-106	Միաձույլ ե/բ միջուկների կառուցում B -15 բետոնով	մ^3	0,50	75,0	37,50	
2	շուկա	ամրան Φ16A500C	տն	0,0990	400,0	39,60	
3	շուկա	ամրան Φ6A 240	տն	0,0155	450,0	6,98	
4	8-163	պատերի կառուցում ուղիղ կտրվածքի Արթիկ տուֆ քարով	մ^3	8,00	22,0	176,00	
5	Շուկա	ամրանային ցանց Φ6 A 240 / 8-1/	տն	0,0137	450,0	6,17	
6	6-90	միաձույլ բետոնե գոտու կառուցում B 7.5 բետոնով	մ^3	0,56	35,0	19,60	
7	շուկա	ամրան Φ12A500C	տն	0,0497	450,0	22,37	
8	շուկա	ամրան Φ6A 240	տն	0,0123	450,0	5,54	
9	շուկա	խարսխաձող Φ12A500C ամրանից	տն	0,0164	450,0	7,38	
		Ծածկ					14,06
1	6-173	միաձույլ ե/բ սալի կառուցում B 15 բետոնով	մ^3	0,95	60,0	57,00	
2	շուկա	Ամրան Φ 16 A-500C	տն	0,0760	450,0	34,20	
3	շուկա	Ամրան Φ 14 A-500C	տն	0,0970	450,0	43,65	
4	շուկա	ամրան Φ12A500C	տն	0,1590	450,0	71,55	
		Բացվածքներ					7,17
1	9-49 7-4	Նկուղի մետաղական դռների տեղադրում	տն	0,0155	250,0	3,88	
2	շուկա	շվելլեր N8	մ	6,5	3,0	19,50	
3	Շուկա	պողպատե խողովակ 40x20x2	մ	7,80	0,8	6,24	
4	Շուկա	Պողպ.թիթեղ b=1.5	մ^2	1,90	6,0	11,40	
5	շուկա	մետաղական բռնակ	հատ	2	1,0	2,00	
6	շուկա	պողպատե ձող Φ18A500c	կգ	2,40	0,450	1,08	

7	Շուկա	ծխնի	հատ	2,00	1,0	2,00	
8	14-398	մետաղական դռների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0,05	60,0	3,00	
9	շուկա	Մետաղապլաստե ապակեփաթեթով բացվող պատուհանների տեղադրում 60մմ հաստ./հայկական պրոֆիլ/	մ^2	1,14	25,0	28,50	
10	շուկա	Մետաղապլաստե ապակեփաթեթով չբացվող պատուհանների տեղադրում 60մմ հաստ./հայկական պրոֆիլ/	մ^2	0,66	20,0	13,20	
		Հատակներ					3,195
1	11-2	Բնահողի տոփանում խճով	100մ^2	0,095	30,0	2,85	
2	11-11	բետոնե նախաշերտ B7.5 մբ. 100մմ հաստ.	մ^3	0,95	30,0	28,50	
3	11-55	Ց/ավազային հարթեց. շերտ 20մմ հաստ.	100մ^2	0,095	75,0	7,13	
		Տանիք					11,7
1	8-300	տանիքի փայտե կոնստրուկցիաների տեղադրում/ծպեղի ,կանգնակի, մարդակի և այլն//	մ^3	0,220	200,0	44,00	
2	8-14-Բ	Կավարամածի կառուցում	մ^2	13,2	0,3	3,96	
3	Շուկա	կավարամածի փայտանյութ	մ^3	0,066	180,0	11,88	
4	9-24	Տանիքի ծածկույթի իրականացում ց/պրոֆիլավոր թիթեղից ԿՊ-25-0,55	100մ^2	0,132	400,0	52,80	
5	8-279	քիվի երեսապատում ց/թիթեղով 0,55մմ	100մ^2	0,07	350,0	24,50	
6	10-203	Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով	100մ^2 մշակ մակ	0,132	20,0	2,64	
7	10-201	տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով	մ^3	0,22	6,0	1,32	
		հարդարում					11,45
1	11-80	առաստաղի քսահարթում ց/ավազային շաղախով	մ^2	9,4	0,4	3,76	
2	11 -126	պատերի սվաղում ց/ա շաղախով	մ^2	27,0	1,5	40,50	
3	11-22	շեպերի սվաղում ց/ավազային շաղախով	մ^2	1,10	4,0	4,40	
4	14-418	պատերի և շեպերի լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով	100 մ^2	0,281	80,0	22,48	
5	14-419	առաստաղի լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով	100մ^2	0,094	90,0	8,46	
6	15-210	Արտաքին շեպերի սվաղում ց/ա շաղախով	100 մ	0,105	60,0	6,30	
7	11-98	ճակատների ց/ավազային սվաղ	մ^2	39,0	1,5	58,50	
		Սալվածք					14,07
1	1-1612 1-1618	տեղանքի հարթեցման համար բնահողի կտրումով մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ փոքելով տեղում	1000մ^3	0,027	300,0	8,10	
2	1-961	բնահողի մշակում ձեռքով	մ^3	5,00	2,0	10,00	
3	1-961	բնահողի փոռում տեղում ձեռքով	մ^3	5,00	2,0	10,00	
4	16-76	բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	0,19	50,0	9,50	
5	11-6	խճի նախաշերտ 8սմ	մ^3	1,30	15,0	19,50	
6	11-11	Բետոնե նախապատրաս-տական շերտ B12.5 մ.բ.,	մ^3	1,30	35,0	45,50	

7	11-55	Ց/ավազային հարթեց. շերտ 20մմ հաստ.	100մ^2	0,033	75,0	2,48
		Ընդամենը				*1221,29*

«ԼԻՄՀԵՐԹ» ՍՊԸ
տնօրեն

Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված թիվ 2
«26» մարտի 2021թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25/1»
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ (ՋՐԵԼԱՏԵՂԻ, ՀՈՎՎԻ ԿԱՑԱՐԱՆ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագադարնոյե բնակավայրի ,,Ավազի հանք,, արոտավայրի հովվի կացարանի կառուցում	**պայմանագրի կնքման օրվանից հաշված**	**31.05.2021թ.**
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

----------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
«Ռազմավարական զարգացման գործակալություն»ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Մ. Այվազյան
լիազորված անձ՝ Գ. Թովմասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Լիմհերթ>>ՍՊԸ
Ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ԱՇԲ ՓԲԸ Ստեփանավանի Մ/Ճ
Հ/Հ 2471400577270010
ՀՎՀՀ 07203843
Լ.Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 26 » մարտի 2021թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25/1»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/1	Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագադարնոյե բնակավայրի ,,Ավազի հանք,, արոտավայրի հովվի կացարանի կառուցում	... %	... %	... %	610645	1221290	1221290	1221290	1221290	1221290	1221290	1221290	1221290	1221290

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
«Ռազմավարական զարգացման գործակալություն»ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Ս. Այվազյան
լիազորված անձ՝ Գ. Թովմասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Լիմհերթ>>ՍՊԸ
Ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ԱՇԲ ՓԲԸ Ստեփանավանի Մ/Ճ
Հ/Հ 2471400577270010
ՀՎՀՀ 07203843

Լ.Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ